ները. Նրանց մարդիկն ութ օրը մի անգամ գալիս են գիւղ և տանում են 1 ոչխար կամ 10 հաւ, $^1/_2$ լիտր ալիւր, $^1/_2$ լիտր շաքար, բացի այդ գիւղացիները այս տարի իրենց հաշուով պահում էին աղաների 72 ձիերը։

—Քէֆ մատաղ,—դարձաւ ինձ մի այլ կին,—մենք ապրել չունենք. աղային իրեք բեռ ցորեն պարտք ունէի, ցանքը աջող չլինելուն չկարացի ետ տալի. էն ղրկեց իր մարդիկին և տարաւ ինձնից 10 օղչար, 1 եզ, 1 լիտր մանած և 1 պղնձէ ղազան։

Այս մռայլ և տխուր պատկերների վրայ պէտք է աւելացնել և աւազակային յարձակումները, որ դամոկլեան սրի նման կախուած է յատկապէս Փէրիա գաւառի հայ գիւղացիութեան գլխին։ Այսպէս, Աղաջանի տնից աւազակները գիշերանց տանում են 100 թուման փող։ Եսայու տնից չորս ոչխար իսկ մի լօռ գալիս է մի այլ գիւղացու տունը և երկու լիտր ցորեն պարտք առնում, որը գիւղ փոխադրելու համար խնդրում է հայից մի էշ. գիւղացին տալիս է, այնուհետև լօռը ոչ էշն է բերում և ոչ էլ պարտքը տալիս։

Ահա այս է սիրելիս, խեղճ գիւղացիների դրութիւնը Սնկերտում։

Հայերն ունեն մի եկեղեցի Ս. Ստեփաննոս անունով, որ հրուչակուած է Ս. Մկրտիչ աւետարանով, որին համբուրելու են գալիս շատ ուխտաւորներ։ Դպրոց չունեն։ Ժողովուրդը տգէտ է։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	140
2	Զուններոր	100
3	Միջակ	300
4	Ունեոր	80
5	Հարուստ	10
	Ընդամենը	630

ԱԴԻԳԱՆ

Սնկերտից դէպի հարաւ, մօտաւորապէս մի ութերորդ